

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ՎԻՆՆԵԹ Հայաստան»  
Կանանց Ռեսուրս կենտրոնների Ցանցի

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

---

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....	3 էջ
2. ՑԱՆՑԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ.....	3-4 էջ
3. ՑԱՆՑԻ ԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ, ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	4-7 էջ
4. ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ.....	7-10 էջ
5. ՑԱՆՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ.....	10 էջ
6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....	10 էջ

# 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1 «ՎԻՆՆԵԹ Հայաստան» Կանանց Ռեսուրս կենտրոնների Ցանցը (այսուհետև՝ «ՎԻՆՆԵԹ Հայաստան») ձևավորվել և գործում է փոխադարձ վստահության, պատասխանատվության, փոխըմբռնման և փոխզիջման, թափանցիկության, հաշվետվողականություն և կառավարման կոլեգիալության սկզբունքների հիման վրա:
- 1.2 Ցանցը Քաղաքացիական Հասարակության Կազմակերպությունների (այսուհետև՝ ՔՀԿ) ոչ ֆորմալ կազմավորում է և գործում է Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը, ինչպես նաև 2018 թվականի փետրվարի 5-ին Ցանցի անդամ կազմակերպությունների հիմնադիր ժողովի ժամանակ ընդունված Հռչակագրին և սույն կանոնակարգին համապատասխան:
- 1.3 Ցանցի անվանումն է.
- Հայերեն՝ «ՎԻՆՆԵԹ Հայաստան»:
  - Անգլերեն՝ «WINNET ARMENIA»:
- 1.4 Ցանցը ունի խորհրդանիշ, որն իրենից ներկայացնում է ցանցի անգլերեն անվանման հապավումը:
- 1.5 Խորհրդանիշի պատկերը ներկայացված է սույն կանոնակարգի տիտղոսաթերթի վրա:
- 1.6 Ցանցը կարող է իր նպատակներից և խնդիրներից բխող առաջարկություններ ներկայացնել ՀՀ պետական մարմիններին:
- 1.7 Ցանցը կարող է համագործակցել ինչպես ՀՀ պետական և ոչ պետական մարմինների, արտասահմանյան, միջազգային և տեղական կազմակերպությունների, այնպես էլ անհատ անձանց հետ:
- 1.8 Ցանցը կարող է ունենալ միջազգային կապեր, անդամակցել միջազգային ոչ կառավարական և ոչ առևտրային կազմակերպությունների ցանցերի, կնքել հուշագրեր և համաձայնագրեր օտարերկրյա, միջազգային, տեղական կազմակերպությունների և պետական մարմինների հետ:
- 1.9 Ցանցի քարտուղարության գտնվելու վայրը Գորիսի «Ռեսուրս կենտրոն» Հիմնադրամ/ԳՌԿՀ գրասենյակն է (ՀՀ, ք. Գորիս, 3201, Անկախության 7/14):

## 2. ՑԱՆՑԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2. ՆՊԱՏԱԿԸ - Հայաստանում կանանց հզորացումն է՝ համայնքային, մարզային, ազգային և տարածաշրջանային մակարդակներում կանանց ռեսուրս կենտրոնների ստեղծման և զարգացման միջոցով:

### 2.1 ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1.1 Տնտեսության և քաղաքականության մեջ կանանց **մրցունակության** բարձրացում, այդ թվում՝ շուկայի պահանջներին համապատասխան **կարողությունների** զարգացման միջոցով.

- 2.1.2 Կանանց **գրադվածության** հնարավորությունների աստիճանական ընդլայնում, այդ թվում՝ տեղական մատչելի հումքի վրա հիմնված **սոցիալական ձեռնարկատիրության** զարգացման միջոցով.
- 2.1.3 **Աշխատաշուկայում** կանանց մասնակցության մեծացման և **ընտանիքի խնամքի համադրելիության** հնարավորությունների ընդլայնման համար նպաստավոր **քաղաքականության** միջավայրի ձևավորում և խթանում, այդ թվում՝ կանանց կարիքների վրա խարսխված տնտեսական և սոցիալական քաղաքականության և ծրագրերի մշակման և իրականացման միջոցով.
- 2.1.4 Կանանց տնտեսական և քաղաքացիական **ակտիվության** բարձրացում և **մոբիլիզացում**, այդ թվում՝ իրենց տնտեսական և հանրային շահերի առաջ մղման ուղղված՝ կանանց և նրանց խմբերի միջև **համագործակցության** հաստատման և ծավալման միջոցով.
- 2.1.5 **Սոցիալական փոփոխություններին** ուղղված նախաձեռնությունների **արդյունավետության** բարձրացում, այդ թվում՝ կանանց ռեսուրս կենտրոնների ջանքերի պարբերական **մոնիտորինգի** և **գնահատման** միջոցով.
- 2.1.6 Հայաստանում և Արևելյան գործընկերության այլ երկրներում Ցանցի **դերի ու ազդեցության** մեծացում, ռեսուրս կենտրոնների և դրանց **ցանցի կարողությունների հզորացում**, այդ թվում՝ ռեսուրս կենտրոնների **մարդկային ռեսուրսների** կարողությունների զարգացման, կենտրոնների և ցանցի **գույքի** և **ֆինանսական միջոցների** ընդլայնման, սոցիալական ձեռնարկությունների **ենթակառուցվածքների** զարգացման, միջնաժամկետ և երկարաժամկետ իրատեսական և արդյունավետ **ծրագրերի** մշակման ու դրանց իրականացման, Հայաստանում և տարածաշրջանում Ցանցի **ճանաչելիության** և **միջազգային կապերի** ամրապնդման, այդ թվում՝ ՎԻՆՆԵԹ Եվրոպային անդամակցության միջոցով:

### **3. ՑԱՆՑԻ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԸ, ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

- 3.1 «Վիննեթ Հայաստան» կանանց ռեսուրս կենտրոնների ցանցը բաց է տեղական, տարածաշրջանային և ազգային մակարդակում գործող կանանց ռեսուրս կենտրոնների և նախաձեռնող խմբերի համար, որոնց նպատակները համընկնում են Ցանցի նպատակների հետ:

#### **Կանանց Ազգային Ռեսուրս Կենտրոնը կազմակերպություն է, որը**

- Հիմնված է և գործունեություն է ծավալում տարածաշրջանային և տեղական կանանց ռեսուրս կենտրոնների կողմից՝ ազգային իշխանությունների և/կամ այլ կազմակերպությունների աջակցությամբ
- Աշխատում է համապատասխան սահմանված ռազմավարական նպատակներին
- Գործունեություն է ծավալում ազգային մակարդակում

- Բաց է երկրում գործող տարածաշրջանային և տեղական կանանց ռեսուրս կենտրոնների համար
- Հանդիպումների վայր է հանդիսանում և աջակցում է տարածաշրջանային և տեղական կանանց ռեսուրս կենտրոններին
- Կառավարմում է գործողությունների պլանով և բյուջեով, ունի տարեկան հաշվետվություններ
- Ունի խորհուրդ /վերահսկող մարմին և գործադիր մարմին՝ պատասխանատու կառավարման համար

**Կանանց Տարածաշրջանային Ռեսուրս Կենտրոնը կազմակերպություն է, որը**

- Հիմնված է և գործունեություն է ծավալում տեղական կանանց ռեսուրս կենտրոնների կողմից՝ տեղական և մարզային իշխանությունների և/կամ այլ կազմակերպությունների աջակցությամբ
- Աշխատում է համապատասխան սահմանված ռազմավարական նպատակներին
- Գործունեություն է ծավալում տարածաշրջանային մակարդակում՝ հիմնվելով մարզային և տեղական կանանց ռեսուրս կենտրոնների վրա
- Բաց է մարզում գործող մարզային և տեղական կանանց ռեսուրս կենտրոնների համար
- Հանդիպումների վայր է հանդիսանում և աջակցում է մարզային և տեղական կանանց ռեսուրս կենտրոններին
- Կառավարվում է գործողությունների պլանով և բյուջեով, ունի տարեկան հաշվետվություններ
- Ունի խորհուրդ /վերահսկող մարմին և գործադիր մարմին՝ պատասխանատու կառավարման համար

**Կանանց Տեղական Ռեսուրս Կենտրոնը կազմակերպություն է, որը**

- Հիմնված է և գործունեություն է ծավալում կանանց ռեսուրս կենտրոնների մոդելով՝ տեղական և մարզային իշխանությունների և/կամ այլ կազմակերպությունների աջակցությամբ
- Աշխատում է համապատասխան սահմանված ռազմավարական նպատակների
- Գործունեություն է ծավալում տեղական մակարդակում և մասնակցում է համայնքային զարգացմանը
- Գործում է կանանց կարիքների հիման վրա
- Բաց է կանանց և տարածաշրջանում գործող կանանց ռեսուրս կենտրոնների համար
- Հանդիպումների վայր է հանդիսանում տեղի կանանց համար և աջակցում է նրանց
- Կառավարմում է գործողությունների պլանով և բյուջեով, կազմում է տարեկան հաշվետվություններ

- Ունի խորհուրդ /վերահսկող մարմին և գործադիր մարմին՝ պատասխանատու կառավարման համար

Ցանցի անդամ կարող են լինել այն տեղական, մարզային և ազգային կանանց ռեսուրս կենտրոնները և նախաձեռնող խմբերը, որոնք համապատասխանում են Ցանցի չափորոշիչներին, միացել են Ցանցի Հոչակագրին, ընդունում են սույն Կանոնակարգը, իրենց գործունեությամբ նպաստում են Ցանցի նպատակների իրագործմանը:

3.2 Գրավոր դիմումի համաձայն Ցանցի անդամի ընդունելության մասին որոշումը կայացվում է Ցանցի համակարգող խորհրդի կողմից՝ համակարգող խորհրդի առնվազն երկու անդամների երաշխավորմամբ:

3.3 Ցանցը վարում է իր անդամների հաշվառումը և պարբերաբար թարմացնում նրանց վերաբերյալ տվյալները: Ցանցի անդամների հաշվառում վարելու կարգը և պայմանները սահմանվում է Ցանցի համակարգող խորհրդի կողմից:

3.4 Ցանցի անդամությունից դուրս գալը կատարվում է տվյալ անդամի գրավոր դիմումի կամ Ցանցի համակարգող խորհրդի՝ տվյալ անդամին Ցանցի անդամությունից հեռացնելու մասին որոշման հիման վրա՝ սույն կանոնակարգի 3.6 կետով սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

### 3.5 Ցանցի անդամն իրավունք ունի՝

3.5.1 Ներգրավվել Ցանցի գործունեության մեջ,

3.5.2 Ընտրել և ընտրվել Ցանցի հանձնախմբերում, Համակարգող Խորհրդի անդամ, Համակարգող Խորհրդի նախագահ,

3.5.3 Ստանձնել Ցանցի գործադիր մարմնի ղեկավարումը՝ քարտուղարությունը,

3.5.4 Ստանալ տեղեկատվություն ցանցի գործունեության մասին,

3.5.5 Ներկայացնել առաջարկություններ քննարկվող հարցերի վերաբերյալ:

### 3.6 Ցանցի Ցանցի անդամը պարտավոր է՝

3.6.1 Պահպանել սույն կանոնակարգի դրույթները,

3.6.2 Կամավոր և ակտիվ մասնակցել Ցանցի գործունեությանը, ներկայացնել համապատասխան առաջարկներ Համակարգող Խորհրդին և Հանձնախմբերին,

3.6.3 Նախատեսված լիազորությունների շրջանակներում աջակցել անդամ կազմակերպությունների գործունեությանը,

3.6.4 Բարեխիղճ և ժամանակին կատարել Համակարգող Խորհրդի և Հանձնախմբերի կողմից իր վրա դրված առաջադրանքները,

3.6.5 Հաշվետու լինել Համակարգող Խորհրդին և Հանձնախմբերին ստանձնած պարտականությունների և կատարված աշխատանքների վերաբերյալ,

## 4. ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

- 4.1 Ցանցի կառավարման կառուցվածքն է՝ Ընդհանուր Ժողովը (այսուհետև՝ Ժողով), Համակարգող Խորհուրդը (այսուհետև՝ Խորհուրդ) և Քարտուղարությունը:
- 4.2 Ցանցի գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Ցանցի ժողովի կողմից:

### **4.3 Ցանցի Ընդհանուր ժողովը.**

- 4.3.1 Ցանցի բարձրագույն մարմինը նրա անդամների Ժողովն է, որին պատկանում է Ցանցի կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը:
- 4.3.2 Ժողովը կարող է գումարվել ներկայացուցչական պատվիրակների միջոցով՝ Խորհրդի կողմից սահմանված քվոտայով: Խորհուրդը որոշում է Ժողովի անցկացման օրը, ժամը և տեղը, ինչպես նաև Ժողովի օրակարգի նախագիծը և այդ մասին Ժողովի անցկացումից ոչ ուշ քան 10 օրացուցային օր առաջ էլեկտրոնային եղանակով ծանուցում է Ցանցի անդամներին:
- 4.3.3 Ժողովը իր աշխատանքները կազմակերպում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ:
- 4.3.4 Հաստատում է Ցանցի կանոնակարգը, կատարում է փոփոխություններ դրանում և/կամ հաստատում է նոր կանոնակարգը,
- 4.3.5 Որոշում է Խորհրդի թվաքանակն ու քվոտաները, մեկ տարի ժամկետով ընտրում է Խորհրդի անդամներին, փոփոխում է Խորհրդի կազմը,
- 4.3.6 Վաղաժամկետ դադարեցնում է Խորհրդի անդամների լիազորությունները,
- 4.3.7 Ընտրում է Ցանցի քարտուղարության գործառույթները իրականացնող կազմակերպությանը՝ ձայների մարզ մեծամասնությամբ:
- 4.3.8 Քննարկում և հաստատում է Խորհրդի և Քարտուղարության հաշվետվությունները:
- 4.3.9 Ընդունում է Ցանցի գործընկերության համաձայնագիրը, կանոնակարգը, ռազմավարությունը,
- 4.3.10 Վերակազմակերպում կամ լուծարում է Ցանցը,
- 4.3.11 Ձևավորում է մշտական և ժամանակավոր հանձնախմբեր,
- 4.3.12 Լսում և հաստատում է Խորհրդի հաշվետվությունը,
- 4.3.13 Քննարկվող հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են Ժողովի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ,
- 4.3.14 Ցանցի արտահերթ Ժողով գումարվում է Քարտուղարության, Խորհրդի և անդամների ընդհանուր թվի առնվազն 1/3-ի պատճառաբանված որոշման դեպքում:
- 4.3.15 Արտահերթ Ժողովները հրավիրվում են հրավիրողի օրակարգով: Ժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե Ժողովին մասնակցում են Ցանցի բոլոր անդամների կամ Ժողովի բոլոր պատվիրակների ընդհանուր թվի կեսից ավելին:

4.3.16 Որոշումներն ընդունվում են Ժողովի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ: Ժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել նաև կապի միջոցներով:

#### **4.4 Ցանցի Համակարգող խորհուրդը.**

4.4.1 Համարվում է Ցանցի ղեկավար մարմինը Ցանցի Ժողովների միջև ընկած ժամանակահատվածում,

4.4.2 Բաղկացած է հինգ անդամներից, որոնք ընտրվում են Ժողովի կողմից՝ մեկ տարի ժամկետով,

4.4.3 Ցանցի համակարգող խորհուրդը իր հերթական նիստերը հրավիրում է երեք ամիսը մեկ անգամ՝ Ցանցի քարտուղարության կողմից:

4.4.4 Ցանցի համակարգող խորհրդի արտահերթ նիստ կարող է հրավիրվել խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն 1/3-ի գրավոր պահանջով համակարգող խորհրդի նախագահի կողմից կողմից անմիջականորեն: Կարող են հրավիրվել համակարգող խորհրդի ընդլայնված նիստեր՝ Ցանցի հանձնաժողովների, փորձագիտական կոմիտեի և տարածքային հանձնախմբերի համակարգողների և պատասխանատուների, ինչպես նաև Ցանցի այլ անդամների մասնակցությամբ

4.4.5 Քննարկում և որոշումներ է կայացնում Ցանցի գործունեությանն առնչվող բոլոր հարցերի վերաբերյալ, բացառությամբ այն հարցերի, որոնք մտնում են Ժողովի իրավասությունների մեջ,

4.4.6 Նախապատրաստում է Ցանցի Ժողովները, սահմանում է Ժողովների պատվիրակների քվոտան ըստ Ցանցի անդամների թվի և Ժողովի գումարման օրվանից առնվազն 15 օր առաջ կազմակերպում է պատվիրակների ընտրությունը,

4.4.7 Որոշում է կայացնում Ցանցին անդամագրելու և անդամությունից հեռացնելու վերաբերյալ,

4.4.8 Որոշումներ է կայացնում Ցանցի մշտական և ժամանակավոր հանձնախմբեր ստեղծելու և լուծարելու մասին, հաստատում է դրանց աշխատակարգերը, որոնք չեն կարող հակասել սույն կանոնակարգին:

4.4.9 Քննարկում և Ժողովի հաստատմանն է ներկայացնում Ցանցի ռազմավարական պլանը, ֆինանսական կայունության պլանը, մոնիթորինգային ծրագիրը, տեսանելիության պլանը և այլ փաստաթղթեր,

4.4.10 Որոշում է կայացնում պետական և անկախ կառույցներին կից հասարակական խորհուրդներին, հանձնաժողովներին և այլ մարմիններին, ինչպես նաև միջազգային կառույցներին Ցանցի անդամակցելու վերաբերյալ,

4.4.11 Ընտրում է Խորհրդի նախագահին և վաղաժամկետ դադարեցնում է նրա լիազորությունները,



- 4.4.12 Ցանցի անունից ընդունում և հանդես է գալիս հայտարարություններով, հաշվետվություններով, կոչերով և դիտարկումներով:
- 4.4.13 Խորհրդի նիստը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նիստին մասնակցում են Խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են Խորհրդի նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

#### **4.5 Ցանցի Քարտուղարությունը.**

- 4.5.1 Հանդիսանում է Ցանցի գործադիր մարմինը,
- 4.5.2 Ընտրվում է Ժողովի կողմից 1 տարի ժամկետով, ձայների պարզ մեծամասնությամբ,
- 4.5.3 Ապահովում է Ցանցի մարմինների աշխատանքների բնականոն ընթացքը և թափանցիկությունը,
- 4.5.4 Նախագահում, արձանագրում և ստորագրում է Ժողովի նիստերը,
- 4.5.5 Արձանագրում է Խորհրդի նիստերը,
- 4.5.6 Տնօրինում է Ցանցի արխիվը,
- 4.5.7 Համակարգում է Ցանցի կազմակերպչական աշխատանքները, այդ թվում Ցանցը ներկայացնում է երրորդ անձանց հետ հարաբերություններում: Ցանցի անունից իրավասու մարմիններին և կազմակերպություններին ներկայացնում է Ցանցի կողմից պատրաստված առաջարկները և այլ փաստաթղթերը,
- 4.5.8 Համակարգում է Ցանցի աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ դրամական միջոցների հայթայթման աշխատանքները,
- 4.5.9 Վարում է Ցանցի անդամների հաշվառումը, անդամության նոր դիմումներ ներկայացված հայտերի ռեեստրը,
- 4.5.10 Ցանցի քարտուղարության գործառույթները իրականացնում է Ժողովի կողմից ընտրված կազմակերպությունը, որի գործադիր մարմնի ղեկավարը ի պաշտոնե հանդիսանում է Ցանցի քարտուղարության համակարգողը:

#### **4.6 Ցանցի Հանձնախմբերը.**

- 4.6.1 Մշտական հանձնախմբերը ձևավորվում են Ցանցի անդամ կազմակերպությունների ներկայացուցիչներից՝ նկատի ունենալով Ցանցի ռազմավարական ուղղությունները,
- 4.6.2 Ժամանակավոր հանձնախմբերը ձևավորվում են ըստ անհրաժեշտության,
- 4.6.3 Հանձնախմբերի աշխատանքները համակարգում է հանձնախմբերի պատասխանատուները, որն ընտրվում է հանձնախմբերի անդամների կողմից,
- 4.6.4 Ցանցի անդամ կազմակերպությունը կարող է ներգրավվել մեկից ավել հանձնախմբում,
- 4.6.5 Մշտական հանձնախմբերը նիստերը գումարվում են առնվազը երկու ամիսը մեկ անգամ անմիջական հանդիպումների կամ առցանց եղանակով:

## 5. ՑԱՆՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ

### 5.1 Ցանցի գործունեության ընդհանուր սկզբունքներ են՝

- Օպերատիվ և համարժեք արձագանքում առկա կարիքներին,
- Անդամների մասնակցություն որոշումների ընդունման գործընթացներում,
- Քաղաքական ուղղվածության բացակայություն,
- Ակտիվ կապ և նվիրվածություն,
- Անդամ կազմակերպությունների առջև հաշվետվողականություն և թափանցիկ գործունեություն:

### 5.2 Ցանցի կառավարման սկզբունքներն են՝

- Անկախություն,
- Թափանցիկություն,
- Արդյունավետություն,
- Ժողովրդավարություն,
- Բազմակարծություն

## 6. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1) Ցանցը կարող է դադարել համաժողովի որոշմամբ, եթե այդ որոշմանը կողմ է Համաժողովի անդամների ընդհանուր թվի 2/3-ը:
- 2) Ցանցի դադարումը անդամ կազմակերպությունների համար պարտավորություններ չի առաջացնում: